<<Հայկազունք >> ՍՊԸ-ի տնօրեն՝

Կ. Մացակյանին

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Նոր Հաճնի №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ծանրոցների մատակարարման **ՆՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02 գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում Ձեր կազմակարպությունը ճանաչվել է ընտրված մասնակից և** «31» օգոստոսի 2023թ. կնքվել է պայմանագիր, ըստ որի <<Հայկազունք >> ՍՊԸ-ն պարտավորվել է համապատասխան պահանջագրերի հիման վրա մատակարարել **ՆՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02 -1 պայմանագրի Հավելված N1-ով սահմանված սննդամթերքը:**

28.11.2023թ-ից սկսված պահանջագրերի դիմաց մատակարարումը չի իրականացվել:

Առաջնորդվելով **ՆՀՀԴ-ԳՀԱՊՁԲ-2023/02 -1 պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի բ պարբերությամբ և 8.11 կետով** «Նոր Հաճնի №1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ **-ը միակողմանի լուծում է պայմանագիրը:**

Պատշաճ ծանուցումը ապահավելու նպատակով կիրառում ենք ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի դրույթները: **Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի մակողմանի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարեկելուն հաջորդող օրը:**

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի « ա » պարբերության հիմքով Ձեր կազմակերպությունը պարտավորվում ենք ներկայացնել լիազոր մարմին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձաց ցուցակում ներառելու նպատակով:

Ընդունել ի գիտություն

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը .կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներ:

Ընդունել ի գիտություն.

Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Տնօրեն՝ _____ Գ.Աբրահամյան

Կատարող՝ Գնումների համակարգող
Կ. Հովսեփյան, հեռ. 093-73-11-99